

24613

ՊՐԱԳԱԿՏԻՎԻ ՀԱՄԱՐ

№

Ո՞ՒՄ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՅԵՎ

ԻՆՉՈՒ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ՎՏԱՐՈՒՄ
ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

(Զբօւյցներ բանվորների հետ)

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒԹՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՍՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐԱԼԶՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

15 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱԿԱՆ
ՔԱՆԱԿՈՐՆԵՐԻ
ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆ

331-88

Ո-48

ՈՒՄ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՑԵԿ

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՎՏԱՐՈՒՄ
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԻՑ

119

(Զբոսայգիներ բանվորների հետ)

Թեմատիկ խմբակներ
աշխատանքի ծրագիր
և նյութեր

ՀՐԱՑԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒԹՈՂ ԲԱՆԱԿՈՐՆԵՐԻ ԱՐԶՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐԱԼԻԶԱՄԱՐԿԱՆ

54680-ահ

41692-68

ՀԱՅՊՐԵՆԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
 ՊԱՏՎԵՐ 579 ՏԻՐԱԺ. 1000
 ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ. 1473 Բ.

«Ում եմ ընդունում Միության մեջ և ինչի համար վտարում միությունից», — խմբակի ծրագիրը բաժանված է յերկու զրույցի:

Առաջին զրույցն է՝ «Ում եմ ընդունում Միության մեջ», իսկ յերկրորդ զրույցը՝ «Ինչի՞ համար վտարում եմ Միությունից»:

Յերկու զրույցների հիմնական նպատակն է պարզաբանել, Վոր արհմիությունները մեր յերկրում բանվոր դասակարգի հզորագույն կազմակերպություններն են հանդիսանում: Նրանք համախորժում են վարձու աշխատողներին՝ նրանց տնտեսական գրությունը բարվոքելու և կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև միատեղ պայքար մղելու պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու և մեր յերկրի տնտեսական հզորությունն ուժեղացնելու համար:

Արհմիությունները բանվորական կազմակերպություններ են և այդ պատճառով

եւ, բնականորեն, նրանք միավորուած են նրանց, ովքեր վարձու աշխատողներ են, ովքեր բանվորական դասակարգին են պատկանում: Սա այն հիմնականն է, վոր կարմիր գծով պետք է անցկենա յերկու գրույցների միջով: Դրան զուգընթաց դրանորում են այն պատճառները, վորոնց հիման վրա միություններն իրենց շարքերում չեն ընդունում քաղաքացիական իրավունքից զրկված անձանց, առևտրականներին, տնայնագործներին, արհեստավորներին, գյուղացիներին և մի շարք սահմանափակումներ են անում սեփական-պատահական բանվորներին միության մեջ ընդունելիս:

Պարզաբանելով այս հիմնական հարցերը՝ անհրաժեշտ կլինի կանգ առնել նաև միութենական կարգապահության (դիսցիպլինայի) և միության մեջ ընդունելու և նրանից վտարելու գոյություն թյուն ունեցող կարգի վրա:

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ՈՒՄ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Այն հիման վրա, վոր արհմիությունները բանվորական մասսայական կազմակերպություններն են, բացառել թե միությունները ո՞ւմ և ինչի՞ համար ընդունում են իրենց շարքերում և ո՞ւմ չեն ընդունում: Միաժամանակ պետք է կանգ առնել սեզոնային բանվորներին միության մեջ ընդունելու կարգի վրա, զուգընթացաբար պարզաբանելով միության մեջ ընդունելու գոյություն ունեցող տեխնիկան:

ԶՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Ի՞նչ բան է արհեստակցական միությունը:

2. Ո՞վ կարող է միության անդամ լինել:

3. Ինչո՞ւ միությունը սահմանափակումներ է դնում սեզոնային բանվորներին միության մեջ ընդունելիս:

4. Ո՞ւմ և ինչո՞ւ համար չեն ընդունում միության մեջ:

5. Միության մեջ ընդունվելու կարգը:

ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԿԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ բան է արհեստակցական միությունը

Մեր արհմիությունները Խորհրդա-
յին Միության ամբողջ բանվոր դասա-
կարգի կազմակերպված մասն են հանդի-
սանում:

ԽՍՀՄ-ի արհեստակցական Միու-
թյունների նպատակն է վոչ միայն ա-
ռանձին անդամների անհատական շահե-
րը պաշտպանել, այլև պայքարել հանուն
ամբողջ բանվոր դասակարգի շահերի՝ իր
ամբողջությամբ: Իսկ բանվոր դասա-
կարգի հիմնական գլխավոր նպատակը
միայն այն չէ, վոր աշխատավարձը մի
քանի կոպեկով բարձրանա կամ բանվո-
րական ուրը մի քիչ կրճատվի և գրանով
բավականանալ—բանվոր դասակարգի
նպատակներն ավելի ընդարձակ են, նը-
բանը ձգտում են աշխատավորության
կատարյալ ու վերջնական ազատագրմա-
նը անտեսական և հոգևոր ստեղծությու-
նից:

Ահա թե ինչո՞ւ մեր միության կա-
նոնադրության առաջին կետում ասված է,

վոր միության նպատակն է՝ աջակցել հե-
ղափոխական և դասակարգային կռի-
վարգացման ամբողջ աշխարհում՝ տապա-
լելու կապիտալիստների իշխանությունը
և պրոլետարական դեկտատուրայի միջո-
ցով կոմունիզմը կենսագործել:

Համադասակարգային այս նպատակը
պետք է բարձր կանգնած լինի մյուս բո-
լոր նպատակներից: Միության աշխա-
տանքի յեղակետը համադասակարգային
այս շահերն են, վորոնք նա հակադրում է
բանվոր դասակարգի առանձին մասերի
խմբակային, համբարական շահերին:

Միության և վոչ մի անդամ և վոչ մի
միութենական կազմակերպություն չի կա-
րող ինքն իրեն հակադրել ամբողջ միու-
թյանը: Յուրաքանչյուր բանվոր, յուրա-
քանչյուր ծառայող պետք է իրեն ճանա-
չի վորպես մեկ անդամը բանվոր դասա-
կարգի, վորը կոչված է կործանել հին աշ-
խարհը՝ իր ճնշումներով ու տանջանքնե-
րով և ստեղծել մի այլ կյանք, նոր կո-
մունիստական հիմունքներով:

Վերջնական այդ նպատակից յեղնե-
լով, Միությունն ընդգծում է իր մոտա-
կա անելիքները և խնդիրները: Այդ խըն-
դիրները սերտորեն կապված են տնտեսա-
կան այն պայմանների հետ, վորոնց մեջ

ներկայիս ապրում են արհմիությունները:

Տնտեսական պայմանները փոխվելուն պես, արհմիությունն ել փոխում է իր խնդիրները: Ռազմական կոմունիզմի շրջանում, յերբ իշխանության, գործարանների և հողի համար կռիվ եր մղվում կալվածատերերի ու կապիտալիստների դեմ, միությունների նպատակն եր՝ համախմբել իրենց բոլոր ուժերը, սկսված կռիվը իր հաջող վախճանին հասցնելու համար: Տնտեսական նոր քաղաքականությանն անցնելիս՝ արհմիություններն ել համապատասխան փոփոխություն մտցրին իրենց անելիքների մեջ:

Ներկայումս Միության հիմնական խնդիրներն են՝ իր անդամների տնտեսական դրության բարելավումը և նրանց կուլտուրական մակարդակի բարձրացումը: Բացի այդ՝ պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում միությունը հոգում է և աջակցում է նրանց ձեռնարկության աշխատանքի լավագույն կազմակերպմանը: Ինքնընտրության պարզ ե, վոր մասնագիտական և կոնցեսիոն ձեռնարկներում միությունը չի կարող ձգտել արտադրության այնպիսի ամրացման և զարգացման, վորը նպատակը կապիտալիստ-

ձեռնարկատերերի տնտեսապես ուժեղացմանն ու ամրապնդմանը:

Այս խնդիրը կենսագործելիս Միությունը վոչ մի վայրկյան չպետք է մոռանա, վոր իր նպատակն է աջակցել համադասակարգային գործին, հանուն վորի յերբեմն հարկ կլինի բանվորների այս կամ այն խմբակի պահանջները կրճատել:

Այսպես որինաչ, նյութական դրության խնդրի լուծմանը Միությունը մոտենում է՝ հաշվի առնելով տնտեսական ընդհանուր պայմանները և պետական մարմինների միջոցները: Աշխատավարձի խնդրում Միությունն իր քաղաքականությունը խստորեն համաձայնեցնում է խորհրդային տնտեսության իրական դրության, նրա արտադրողականության աճման և նրա միջոցների հետ, յեղնելով ամբողջ բանվոր դասակարգի շահերից և նյութական դրության հետագա հարստուն բարելավման ապահովումից:

Այդպիսով Արհմիությունները, վորպես բանվոր դասակարգի կազմակերպություններ, իրենց գործնական ամբողջ աշխատանքը կառուցում են համադասակարգային շահերի հիման վրա:

Հետևաբար միանգամայն հասկանալի յե, վոր միությունները, իբրև բան-

վորական կազմակերպութիւններ, իրենց շարքերում պիտի ընդունեն նրանց, ովքեր պատկանում են բանվոր դասակարգին:

2. Ո՞վ կարող է միության անդամ լինել

Միության մեջ մտնել կարող են (մեւ կանոնադրության 9-րդ կէտը) բոլոր նրանք, վոր լրացրել են 14 տարին և աշխատում են վարձու՝ կառուցողական արտադրության և շինանյութերի արդյունաբերության մեջ, անկախ նրանից, թե ձեռնարկութիւնը պետական է, կոոպերատիւ՞, թե՞ կոնցեսիոն կամ մասնավոր:

Վարձու աշխատանքից բացի յեկամտի այլ աղբյուր չունեցող և ամբողջ տարին քաղաքներում կամ քաղաքատիպ վայրերում ապրող բանվորները, 2 ամսը վա անընդհատ աշխատանքից հետո, կարող են միության անդամ ընդունվել:

Գլխավոր պայմանը, վոր դրվում է միության մեջ մտնողի առաջ—դա վարձու աշխատանքն է, և վոր, այդ վարձու աշխատանքը նրա դոյության—ապրուստի հիմնական աղբյուրը պետք է լինի: Ուրիշ խոսքով ասած՝ Միության անդամ

կարող են լինել միայն պրոլետարները, վորոնք չունեն արտադրության սեփական միջոցներ և վորոնք, բացի սեփական ձեռքերից, ապրուստի վոչ մի այլ աղբյուր չունեն:

Մեր կանոնադրության մեջ ասված է նույնպես, վոր Միության մեջ մտնելու համար սեռը կամ ազգութիւնը վոչ մի նշանակութիւն չունի:

Մեր միութիւնները նույնպես ազգային վոչ մի խտրութիւն և վոչ մի սահմանափակում չեն դնում միության մեջ ընդունելու համար:

Ուզում ես թուրք յեղիր, չինացի, գերմանացի, սուս կամ ճափոնացի—միեւնույնն է՝ Միութիւնը քեզ կընդունի իր շարքերում, յեթէ միայն դու վարձու աշխատանք ես կատարելու և ապրելու յես քո աշխատանքով:

Կանոնադրության այս ցուցմունքը կարեւոր է նրա համար, վոր նա մատնանշում է մեր միութիւններին կառուցվածքի դասակարգային բնույթը՝ ընդդէմ այն միութիւններին, վորոնք կառուցված են ազգային հողի վրա և վորոնք դեռ դոյութիւն ունեն Սրեմոյան Յեվրոպայում և Ամերիկայում:

Որինակ՝ Լեհաստանում կան հրե-
յական, ուկրաինական և ուրիշ արհմիու-
թյուններ: Ամբողջ աշխարհում բանվոր
դասակարգի դասակարգային շահերը
միատեսակ են. այդ պատճառով ել արհ-
միությունները չեն կարող և չպետք է
մարդկանց բաժանեն ուսաների ու լեհերի,
չինացիների ու անգլիացիների:

Կանոնադրության մեջ ասված է
նույնպես, վոր բանվորները միության
մեջ ընդունվում են անկախ նրանից, թե
նրանք կրոնական կամ քաղաքական ի՞նչ
համոզմունքներ ունեն:

Այդպիսով՝ Միության մեջ կարող են
ընդունվել թե՛ հավատացյալը և թե՛ ան-
հավատը, թե՛ քաղաքականապես գիտա-
կիցը և թե՛ անգիտակիցը: Բայց սա դեռ
չի նշանակում, վոր միությունն անտար-
բեր է դեպի կրոնն ու քաղաքական պայ-
քարը: Արհմիությունները ուժեղ պայ-
քար են մղում կրոնական նախապաշա-
րումների դեմ: Միևնույն ժամանակ մեր
միությունները, ինչպես ասեցինք վերե-
վում, դասակարգային կռիվի քաղաքա-
կան վորոշ գիծ են տանում՝ հանուն պրո-
լետարիատի դիկտատուրայի և հանուն
կոմունիստական հասարակարգի իրա-
կանացման:

Վորպես մասսայական կազմակեր-
պություն՝ արհմիությունները պետք է
իրենց շարքերի մեջ ընդգրկեն բոլոր վար-
ձու աշխատողներին. նրանք չեն կարող
իրենց դռները փակել այն աշխատավոր-
ների առաջ, վորոնք դեռ քիչ գիտակից և
քիչ կուլտուրական են:

Միության նպատակն էլ հենց այն է,
վոր ամենորյա համառ ու անդուլ աշխա-
տանք տանի իր անդամների կուլտուրա-
կան զարգացման, նրանց դասակարգային
ինքնագիտակցությունը զարթեցնելու ա-
մար:

Բացի կառուցողական ձեռնարկներում
աշխատողներից, մեր միության մեջ ըն-
դունվում են նույնպես պրոֆակտիկ-
ֆակների և բարձրագույն դպրոցների ու-
սանողները—ապագա վորակյալ կառու-
ցողները, ճարտարագետները (ինժեներ),
աշխատանքի ղեկավարները, տասնապետ-
ները և այլն: Թեև ուսանողներն ու աշա-
կերտներն ուսման ընթացքում վարձու աշ-
խատանք չեն տանում, բայց նրանք պատ-
րաստվում են կառուցողական աշխատան-
քի համար, և նրանցից ժամանակին դուրս
են գալու բարձր վորակի աշխատողներ:
Միությունը չահագրգռված է, վոր դեռ
աշակերտական նստարանից, ուսանող ժա-

մանակից նրանք ավելի սերտ կապվեն այն արտադրութեան և բանվորական այն կազմակերպութեան հետ, վորը հետազայում միավորելու, համախմբելու յե նրանց:

Այնուամենայնիվ Միությունը վոչ աշխատավորական տարրից ապահովելու նպատակով, կանոնադրութեան մեջ վորոշ սահմանափակումներ են նախատեսնված սովորողներին Միութեան մեջ ընդունելու համար:

Նրանք միութեան մեջ ընդունվում են այն դեպքում, յեթե սովորելու ուղարկված են արհմիությունների, կուսակցական կամ կոմյերիտական կազմակերպութեան, կամ Միութենական Հանրապետութեանների Լուսժողկոմատների կողմից ի հաշիվ աշխատավոր գյուղացիութեանը հատկացված տեղերի:

Այդպիսով, ինչպես ասված է վերևիում, Միութեան մեջ ընդունվելու պարտադիր և հիմնական պայմանը վարձու աշխատանքն է, վորը պետք է հանդիսանա ապրուստի հիմնական աղբյուրը:

Ակամայից հարց ե առաջ գալիս, թե կարո՞ղ են արդյոք միութեան անդամ լինել նրանք, վորոնք մի կողմից վարձու աշխատողներ են, իսկ մյուս կողմից՝ իրենց

գյուղացիական տնտեսությունն ունեն և նրանից յեկամուտ են ստանում:

Այդ մասին խոսենք մանրամասն կերպով:

3. Ինչո՞ւ և ի՞նչ սահմանափակումներ ե դնում միությունը սեզոնային բանվորներին միութեան մեջ ընդունելիս

Այս հարցին պատասխանելուց առաջ պետք է պարզել այն տարբերությունը, վոր կա իր տնտեսութեան յեկամտով ապրող գյուղացու և միմիայն իր ոռճիկով (աշխատավարձով) ապրող քաղաքային բանվորի միջև:

Գյուղացին մանր սեփականատեր է, նա իր տնտեսությունն ու արտադրութեան սեփական միջոցներն ունի: Տնտեսութեանից ստացված արդյունքը, բերքը, միութեանը նրա անձնական սեփակչությունն են կազմում: Արտից ստացած մի փութ դարին, հավերի տծած առսը ձուռ, մի գլուխ կաղամբը և այլն նրա սեփականն են և նա ինչպես ուզենա՝ կարող է վարվել դրանց հետ: Բոլորովին ուրիշ կապ, հարաբերություն կա բանվորի և արտադրութեան միջև:

Բանվորը, բացի իր սեփական ձեռքերից, արտադրութեան ուրիշ վոչ մի մի-

չոց չունի: Նրա աշխատանքի արդյունքը
իրեն չի պատկանում, այլ պատկանում է
ձեռնարկության (գործարանի, արհես-
տանոցի և այլ) տիրոջ:

Բանվորը իր ուժն է վաճառում և դրա
համար վորոշ աշխատավարձ է ստանում՝
այդ ուժը վերականգնելու համար, իսկ
նրա ամբողջ արտադրանքը պատկանում է
պետության, յեթե ձեռնարկությունը պե-
տական է, կամ մասնավոր գործատիրոջ:
Սրա մեջ է բանվորի և գյուղացու հիմնա-
կան զանազանությունը, վորի շնորհիվ էլ
տարբեր են նաև նրանց շահերը:

Գյուղացին չահագորգոված է, վոր-
պեսզի իր անձնական տնտեսությունն ամ-
րապնդվի ու զարգանա, իսկ բանվորը գոր-
ծարանում աշխատում է կոլլեկտիվի մեջ,
իր կոլլեկտիվ (հավաքական) աշխատան-
քով ամբացնելով ամբողջ ձեռնարկու-
թյունը: Այս զանազանությունը արմա-
շական, հիմնական է, բայց և այնպես
Միությունը չի կարող իսպառ անտես
առնել և հրաժարվել իր շարքերն ընդու-
նելու սեզոնային այն բանվորներին, վո-
րոնք կապված են գյուղի հետ և այնտեղ
իրենց սեփական տնտեսությունն ել ունեն:
Միաժամանակ միությունը չի կարող
անխտիր բոլոր սեզոնային բանվորներին

իր շարքերն ընդունել, հենց վոր նրանք
արտադրության մեջ են ընկնում:

Միության նպատակն է ընդունել այն
սեզոնային բանվորներին, վորոնք սկսում
են իրենց կապը խզել սեփական տնտե-
սության հետ և յերկար ժամանակով
կապվել արտադրության հետ:

Ամենքս ել լավ գիտենք, վոր շինա-
րարական արտադրության մեջ հաճախ
պատահական բանվորներ են մտնում,
վորոնք շատ կարճ ժամանակով են գալիս
աշխատելու: Յերկաթուղու կամ խճու-
ղու կառուցման վրա սովորաբար մեծ
թվով գյուղացիք են գալիս աշխատելու
մոտակա գյուղերից: Իրենց մոտիկ չըջա-
նում հենց վոր այդ աշխատանքներն ա-
վարտում են, նրանք նորից վերադառ-
նում են դեպի իրենց տնտեսությունը:
Պարզ է, վոր միությունը չի կարող այդ
տեսակի կառուցող բանվորներին իր շար-
քերի մեջ ընդունել:

Միության մեջ չեն կարող ընդունվել
նաև այն սեզոնայինները, վորոնք թեև
քաղաք են գալիս աշխատելու, բայց սե-
զոնը վերջանալուն պես վերադառնում են
գյուղ, դեպի իրենց տնտեսությունը:

Յեթե միությունը ընդունելու լինեք
անխտիր բոլորին, ովքեր կառուցումների

վրա յեն աշխատում, այդ դեպքում նրա շարքերը կլցվեյին պատահական, վոչպրոլետարական տարրերով: Նա ստիպված կլինեիր իր շարքերն ընդունել չափից դուրս մեծ թվով նորեկներ, վորոնց չպետք է կարողանար դաստիարակել և իր շարքերում պրոլետարական առողջ գիտցիպլինա և կոմպածություն ստեղծել:

Այդ վտանգը առնձնապես կարևոր է մեր միության համար, վորը խիստ արագ թափով աճում է տարեցտարի: 1924 թվի հոկտեմբերի 1-ին մեր միությունն ուներ 345 հազար անդամ, 1925 թվի հոկտեմբերին այդ թիվը հասավ 575 հազարի, 1926 թվին 743 հազարի, իսկ 1927 թվին 924 հազար: Յերեք տարվա մեջ միությունը մեծացել է համարյա 3 անգամ:

Պարզ է, վոր միության աճման այդ թափը պահանջում է ավելի խիստ վերաբերմունք ցույց տալ և ավելի մեծ պահանջներ առաջադրել բոլոր նրանց, ովքեր առաջին անգամն են մտնում միության շարքերը, մանավանդ նրանց, ովքեր քյուդի հետ են կապված և իրենց անտեղությունն ունեն:

Մեր միության 7-րդ համագումարը այդ հանդամանքը հաջվի առնելով, վորո-

չեց՝ սեզոնայիններին միության մեջ բնդունել միայն այն դեպքում, յերբ նրանք յերկրորդ սեզոնին ել դալիս են աշխատանքի, պայմանով վոր առաջին սեզոնում նրանք լրիվ աշխատած լինեն:

Յեվ վորովհետև շինարարական սեզոնը ամեն տեղ միանման տեղություն չունի, այդ պատճառով սեզոնի տեղությունը ըստ շրջանների սահմանվում է հետևյալը.—

Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում, Դաղստանում, Ղրիմում, Թուրքմենստանում, Կիրգիզիայում և Ուզբեկստանում՝ 8 ամսից վոչ պակաս: Ներքին Վոլգայի շրջանում, Բելոռուսիայում և Հեռավոր Արևելքում, Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայում 7 ամսից վոչ պակաս: Մուրմանսկում, Կարելիայում, Արխանգելսկում, Վոլոդլայում, Հյուս.—Դվինսկում, Կոմի-Չիրյանսկում, Յակուտիայում և Կամչատկայում 5 ամսից վոչ պակաս: Իսկ մնացած շրջաններում՝ 6 ամսից վոչ պակաս:

Սեզոնային բանվորներին միության մեջ ընդունելու համար սահմանված այդ սահմանափակումները միությանը հնարավորություն են տալիս վոչ միայն իր

չարքերը պատահական սարքերից ապահովելու, այլև ավելի համաչափ դարձնելու միության աճումը, վորով միությունը ի վիճակի կլինի վերադաստիարակել իր շարքերը նոր մտնող կիսադյուղացիական մասսաներին:

4. Ո՞ւմ և ի՞նչու չեն բնդունում միության մեջ

Վորոշ կարգի մարդիկ կան, վորոնց բոլորովին չեն բնդունում միության մեջ, թեկուզ նրանք վարձու աշխատողներ լինեն:

Ամենից առաջ միության անդամ չեն կարող լինել նրանք, ովքեր խորհրդային սահմանադրությամբ զրկված են քաղաքացիական իրավունքներից:

Ահա թե ովքեր զրկված են բնորական իրավունքից. —

1. Շահ ստանալու նպատակով ուրիշի վարձու աշխատանքից ոգտվողները:

2. Վոչ-աշխատավորական յեկամտով ապրող անձինք, ինչպիսիք են՝ զրամագրված խի տոկոս ստացողները, ձեռնարկությունից յեկամուտ ունեցողները, կայքից հասույթ վերցնողները և այլն:

3. Մասնավոր առևտրականները և առևտրական միջնորդները:

4. Նախկին վոստիկանության մեջ ժանդարմներին ալում և պահնորդական բաժիններում ծառայած գործակալները (ազենա) և ծառայողները, ինչպես նաև Ռուսաստանում թաղավորած տան գերդաստանի անդամները:

Այս բոլորը չեն կարող միության անդամ լինել, վորովհետև նրանք պատկանում են մեկ ուրիշ—թշնամի դասակարգի: Նրանց անտեսական շահերը միանգամայն հակասում են վարձու աշխատողների շահերին:

Անպայման իրավացի յե միությունը, վոր իր շարքերում չի բնդունում վերևում թված դասի մարդկանց:

Վորպես հեղափոխական-դասակարգային կադմակերպություններ՝ միությունները պարտավոր են պահպանել իրենց մաքրությունը և իրենց շարքերը չապականել անպետք տարրերով, վորոնց քայքայիչ-կադմալուծող ազդեցությունն առանձնապես վտանգավոր է, նկատի առնելով, վոր միության շարքերում գեւ կան կիսադիտակից և պասսիվ անդամներ:

Այդ պատճառով միության մեջ չեն բնդունվում վոչ միայն մասնավոր ձեռնարկությունների տերերը, բնկերակիցները և

հավատարմատարները, այլ և չեն ընդուն-
վում կապալառուները, մասնավոր և կոն-
ցրսիոն ձեռնարկությունների վարչա-
տեսինիկական կազմի մեջ մտնող այն ան-
ձինք, վորոնք իրավունք ունեն բանվորներ
ընդունելու և արձակելու, գործատերերի
մոտիկ ազգականները, անկախ նրանց վա-
րած պաշտոններից:

Միության մեջ չեն ընդունվում նույն-
պես տնայնագործները, աշխատավորական
արտելների անդամները, մենակները, վո-
րոնք առանց աշխատավորական պայմա-
նագրի, կամ իրենց գործիքներով ու նյու-
թերով են աշխատում:

Միության մեջ չեն ընդունվում նաև
արտելների այն ավագները, վորոնք կա-
պալառուական կամ կիսակապալառուա-
կան պայմանով են աշխատում, տանում են
արտելի ներքին ղեկավարությունը և ար-
տելից լրացուցիչ վարձատրություն են
ստանում:

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր
միությունը չի կարող իր շարքերն ընդու-
նել բոլոր նրանց, ովքեր աշխատանք են
փնտրում և գործազուրկ են համարվում:

Մենք չենք կարող միության մեջ ըն-
դունել նրանց, վորոնք վոչ մի միության

անդամ չեն յեղել և մեզ մոտ են գալիս
միայն այն ժամանակ, յերբ գործազուրկ
են դառնում: Այլապես մենք մեր շարքերը
կլեցնենք այնպիսի տարրերով, վորոնք
բանվոր դասակարգին, աշխատավորների
շարքին չեն պատկանում, վորոնք պետք
ունեն միայն միության անդամատուրի,
վորպեսզի ոգտագործեն այն և ոգտվեն այն
բոլոր իրավունքներից և արտոնություննե-
րից, վոր տալիս է այդ անդամատուրը
պրոլետարիատի ղեկատուութայի պայման-
ներում:

5. Միության մեջ ընդունելու կարգը

Միության անդամագրվելը միանգա-
մայն կամավոր է: Շինարարական գործում
ամեն մի աշխատանքի մտնող, վոր սկզբում
մի այլ միության անդամ չի յեղել, կամա-
վոր կերպով հայտարարություն է տալիս՝
թե կամենում է միության մեջ մտնել, և
համապատասխան հարցաթերթ է լրաց-
նում:

Հայտարարության հետ միասին հար-
ցաթերթը ներկայացվում է ձեռնարկու-
թյան բանվորական կոմիտեյին (տեղկո-
մին) կամ խմբակային լիազորին:

Բանվորական կոմիտեն իր նիստում
քննում է հայտարարությունը և, իր յեղ-

բակացութեան հետ միասին, ներկայաց-
նում է ընդհանուր պատգամավորական
կամ համըլարական ժողովի քննութեանը,
վորոնք և կատարում են վերջնական ըն-
դունելութունը: Ժողովում լսում և քնն-
նարկում են միութեան մեջ բնդունելու
դեմ յեղած հավանական առարկություն-
ները:

Միութեան մեջ բնդունելիս թե
բանկոմիտեն և թե ժողովը պետք և խիստ
կերպով ղեկավարվեն կանոնադրութեամբ:

Միութեան մեջ բնդունելու առաջին
կարգը հնարավորութուն և տալիս անհա-
տական մոտեցում ունենալ և յուրաքան-
չյուր նոր բնդունվողի առանձին քննու-
թեան յենթարկել:

Ճիշտ և, վոր սեզանի յեռուն ժամա-
նակ, յերբ խմբերով են բանվորներ դալիս
կառուցումների վրա աշխատելու, միու-
թեան մեջ բնդունվելու համար գիմումները
տրվում են կապոյներով: Ընդհանուր ժո-
ղովների քննութեանը ներկայացվում են
մեկ անգամից 150-200 գիմում: Հասկանա-
լի չէ, վոր աշգպիտի իռչոր քանակու-
թեամբ հայտարարությունների գեղքում
անհատական մոտեցումը գծվար և: Այդ
պատճառով ել հանձնարարվում և բնդու-
նելությունները կատարել համըլարական

Ժողովների, իսկ խմբակներում՝ աշխա-
տանքի առանձին վայրերի ժողովների մի-
ջոցով:

Ընդհանուր, պատգամավորական կամ
համըլարական ժողովների վորոշումները
վերջնական են: Միութեան վարչությունն
իրավագոր և բեկանելու միութեան մեջ ըն-
դունելու մասին այդ ժողովների կայացրած
վորոշումները, յեթե դրանք հակասում են
կանոնադրութեանը:

Ընդհանուր, պատգամավորական կամ
համըլարական ժողովներում բնդունելու-
թեան խնդիրը դրական լուծումն ստանա-
լուց հետո, տրվում և անգամատումս,
հենց վոր նա մուծում և մուտքի վճարը:

Նոր բնդունվածի միութենական ստա-
ժը հաշվվում և մուտքի վճարը մուծելու
որվանից:

Մեկնակներին միութեան մեջ բնդունե-
լու վորոշում կայացնում են ընդհանուր ժո-
ղովը և բանկոմը և ապա հաստատում և
միութեան համապատասխան վարչու-
թյունը:

Միութեան անգամի բնդունելութեան
խնդիրները քննվում են բացառապես մատ-
նանշված կարգով: Ընդունելութեան վերա-
բերմամբ վոչ մի հանձնարարով չի կարելի
ստեղծել:

Միության մեջ չմտած (անկաղմա-
կերպ) բանվորներին չբնանում բանվորա-
կան կոմիտեն պետք է նախորդ նախա-
պատրաստական աշխատանք տանի:

Բանվորական կոմիտեն չկազմակերպ-
վածների առանձին ժողովներ և դումա-
րում, վորտեղ բացատրում է միության
նպատակներն ու անելիքները: Միության
մեջ նոր ընդունվածներին ծանոթացնում է
միության կանոնադրության և միության
անդամի իրավունքների ու պարտականու-
թյունների հետ:

Քանի վոր սեղոնային բանվորները,
նախորդ սեղոնին լրիվ աշխատելու դեպ-
քում միայն ընդունվում են միության մեջ
յերկրորդ սեղոնին, նրանք միության մեջ
ընդունվելիս պետք է ներկայացնեն իրենց
աշխատավորական ստաժը հաստատող
հաշվեգրքույկը:

Այսպես ուրեմն՝ ամփոփելով մեր
դրույցը, տեսնում ենք, վոր արհմիու-
թյունները հանդիսանում են բանվոր դա-
սակարգի մասսայական կազմակերպու-
թյունը, վորի խնդիրները սերտորեն կապ-
ված են ամբողջ բանվոր դասակարգի ընդ-
հանուր խնդիրների հետ և ձգտում են կո-
մունիզմի իրագործման՝ պրոլետարիատի
դիկտատուրայի միջոցով: Յեղնելով վերջ-

նական այդ նպատակից, միությունը տա-
նում է մասսաների սպասարկման, նրանց
տնտեսական շահերի պաշտպանության
և նրանց կուլտուրական մակարդակի բարձ-
րացման իր ամենորոյա աշխատանքը:

Միության առաջ դրված խնդիրները
և դրանց դասակարգային ելությունը պա-
հանջում են միության շարքերի մաքրու-
թյուն: Այդ պատճառով էլ միություն-
ներն իրենց շարքերը պահպանում են բան-
վոր դասակարգին թշնամի և վոչ պրոլե-
տարական տարրերից՝ մի շարք սահմանա-
փակումներ սահմանելով գյուղի հետ կապ-
ված սեղոնային բանվորներին միության
մեջ ընդունելիս:

ՄԵԹՈԴԱԿԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

«Ո՞ւմ են ընդունում միության մեջ»
նույթը մշակելիս, պարագմունքի հիմնա-
կան ձևը պետք է գրույցը լինի: Ղեկավարն
ինքը պետք է մշակի նյութը և մատնանչի
այն հարցերը, վորոնք հաջորդաբար առա-
ջադրելու յե ունկնդիրներին, շարժելով նը-
րանց ակտիվ մասնակցությունը՝ նյութը
մշակելու:

Հարցերի պատասխանները պետք է
ամփոփել, նրանց մասին բացատրություն-

ներ առլ և ընդհանրացրած յեզրակացություններ հանել:

Զրույցը կարելի չէ սկսել մասնանշելով մարդկային հասարակության բաժանումը յերկու թշնամի դասակարգերի— սեփականատեր—կապիտալիստների դասակարգի և ընչազուրկ—բանվոր դասակարգի—և այդ դասակարգերի կոխը: Ունկընդիւրների այդ կովում ունեցած մասնակցության փորձի հիման վրա պարզել, թե ինչո՞ւ համար և կովում բանվոր դասակարգը:

Ամփոփելով պատասխանները՝ կրհանգենք այն յեզրակացության, վոր բանվոր դասակարգը կովում և կապիտալիստների դասակարգի իշխանությունը տապալելու համար, վորպեսզի իր գիկտատուրայի միջոցով հաստատի կոմունիստական նոր կյանք:

Սա դասակարգի հիմնական նպատակն է:

Ի՞նչ և անում պրոլետարիատը իր կոխը հաջող ու հաղթական դարձնելու համար:

Նա ստեղծում է իր բանվորական կազմակերպությունները և, առաջին հերթին, նա ստեղծում է իր արհմիությունները:

Դրանից բղխում է այն յեզրակացությունը, վոր արհմիությունները բանվոր դասակարգի կազմակերպություններ են:

Նրա նպատակները յենթարկվում են համադասակարգային նպատակներին և սերտորեն կախումն ունեն նրանցից: Այդպիսով մենք հանգում ենք արհմիության նպատակների և անելիքների դրսևորմանը:

Արհմիության նպատակների և անելիքների դասակարգային էությունը հայտարարելուց հետո մենք արդեն ընդհուպ մոտենում ենք այն հարցին, թե ո՞ւմ կարելի չէ միության մեջ ընդունել: Պարզ է, վոր միության անդամ լինել կարող են միայն նրանք, ովքեր պատկանում են բանվոր դասակարգին, այսինքն՝ ովքեր վարձու աշխատող են, իրենց աշխատանքը վաճառում են:

Դրանից, բնականորեն, ծագում է սեզոնային բանվորների միության անդամ լինելու խնդիրը, —նրանք, վորոնք գյուղում իրենց անտեսությունն ունեն և բացի աշխատավարձից, դրանից ել յեկամուտ են ստանում:

Զրույցի հաջորդ մասում խոսվում է այն խմբակները հայտարարելու մասին, վորոնք իսպառ չեն ընդունվում միության

մեջ նույնիսկ այն դեպքում, յեթե նրանք
վարձու աշխատանք են տանում: Զրույցի
այս մասի մշակումը առանձին գովարու-
թյուն չի ներկայացնում: Զրույցի վերջին
մասը ունկնդիրներին ծանոթացնում է
միության մեջ բնդունվելու կարգի և տեխ-
նիկայի հետ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՁԻ՝ ՀԱՄԱՐ ՎՏԱՐՈՒՄ ԵՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս զրույցի նպատակն է պարզել այն
պահանջները, վոր առաջադրում է միու-
թյունն իր անդամներին: Միաժամանակ
բուսաբանվում է միութենական գիտցիպ-
նայի եյությունն ու նշանակությունը: Այդ
հիման վրա ել պարզվում են միությունից
հեռացնելու պատճառներն ու կարգը:

ԶՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Ի՞նչ պահանջներ է առաջադրում
արհմիությունը իր անդամներին:
2. Ի՞նչ է արհմիութենական գիտցիպ-
լինան և վո՞րն է նրա նշանակությունը:
3. Ի՞նչ պատճառով և ինչպե՞ս են վր-
տարում միության անդամությունից:
4. Սեզոնային բանվորը ինչպե՞ս կա-
րող է իր անդամության իրավունքը պահ-
պանել նաև սեզոնը (աշխատանքի, գործի

չըջանը) փակվելուց հետո—գաղարի սե-
ղոնում:

5. Միության անդամությունից հե-
ռացնելու ինչպիսի՞ կարգ է սահմանված:

ԶՐՈՒՅՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ պահանջներ է առաջադրում Ահնիությունն իր անդամներին

Նախորդ գրույցի մեջ մենք կանգ ա-
ռանք այն խնդրի վրա, թե ո՞ւմ և ի՞նչ
կարգով պետք է ընդունել միության մեջ:
Այս գրույցով մենք կանգ կառնենք այն
խնդրի վրա, թե ի՞նչ պատճառներով և
ի՞նչպիսի կարգով պետք է վտարել—հե-
ռացնել միությունից:

Նախ՝ մենք պարզենք այն պահանջ-
ները, վոր միությունն առաջադրում է իր
անդամներին և այն պարտականություն-
ները, վոր միության յուրաքանչյուր ան-
դամ պարտավոր է կատարել:

Մեր միության յուրաքանչյուր ան-
դամ պետք է կատարի մի շարք խիստ
եյական և կարևոր ձևականություններ,
վոր մասնանշված են միության անդամա-
գրքույկի 3-րդ յերեսում և վորոնք հիմ-
նականում հետևյալն են՝

Միության գործադուրկ անդամները,
գործադրկության առաջին որից պետք է
ներկայանան միությանը՝ հաշվառման
համար, իսկ գործադրկությունից ազատ-
վելուն պես անդեկացնեն այդ մասին միու-
թյանը:

Շինարարական սեզոնն ավարտելիս և
հայրենիք ճանապարհվելիս, ինչպես նաև
հայրենիքից վերադառնալիս՝ միության
անդամը նույնպես պարտավոր է ներկա-
յանալ հաշվառման համար: Այլ քաղաք
տեղափոխվելիս կամ մի այլ միության
մեջ փոխադրվելիս՝ միության անդամը
պարտավոր է նախկին կազմակերպության
հաշվառումից դուրս գրվել և հաշվառ-
ման յենթադիվել այն կազմակերպության
մեջ, վորտեղ նա անդափոխվում է:

Այս պարտականությունների կատա-
րումը հնարավորություն է տալիս միու-
թյանը իր անդամների հաշվառումն ա-
նել և միաժամանակ միության յուրաքան-
չյուր անդամին ել հնարավորություն է
տալիս գործադրկության կամ սեզոնի դա-
դարի ընթացքում, առանց անդամավճար
տալու, մնալ միության անդամ:

Միության անդամների հիմնական
պարտականությունները ցույց են տրված
կանոնադրության 22-րդ կետում:

Առաջին պարտականութիւնը.—Միութեան յուրաքանչյուր անդամ պարտավոր է կանոնավոր և ժամանակին մուծել իր անդամավճարը։ Այս պահանջը միանգամայն հասկանալի չէ։ Միութեանը ապրում է և իր ամբողջ աշխատանքը կատարում է միայն այն հատկացումներով (փողով), վոր վճարում է միութեան յուրաքանչյուր անդամ։ Անդամավճար չըվճարող անդամը հարվածում է միութեան հիմնական կողմին—ներա Ֆինանսներին, այդ պատճառով եւ միութեան ամեն մի անդամ պարտավոր է իր այդ պարտքը կատարել կանոնավոր ու ժամանակին։

Յերկրորդ պարտականութիւնը.—Միութեան անդամը պետք է աջակցի իրագործելու միութենական մարմիններին բոլոր վորոշումներն ու վճիռները։ Միութեան մեջ մտնողը դառնում է կոլլեկտիվի անդամ և նա անպայման պարտավոր է յենթարկվել մեծամասնութեան կամքին։ Այդ կոլլեկտիվի վորոշումները պարտադիր են միութեան ամեն մեկ անդամի համար և միութեան իր անդամներից պահանջում է վոչ միայն իր վորոշումները կատարել, այլ և այդ վորոշումներն իրագործելուն ամեն կերպ աջակցել։

Միութեան վորոշումներն ինքդ կա-

տարի՛ր և աջակցի՛ր, վոր ուրիշներն էլ կատարեն. այն ժամանակ կազմակերպութեանը միաձույլ և ուժեղ կլինի։

Ի վերջո՛՝ Միութեանը պահանջում է, վորպեսզի իր անդամները անպայմանորեն յենթարկվեն կանոնադրութեանը և միութենական պրոլետարական դիսցիպլինային և կատարեն համարական պայմանագրի բոլոր կետերը։

2. Ի՞նչ բան է պրոլետարական դիսցիպլինան և վո՞րն է նրա նշանակութիւնը

Ինչպես գիտենք, ամեն մի գործ պահանջում է կարգ ու կանոն—դիսցիպլինա։ Առավել ևս կարգ ու կանոնը անհրաժեշտ է բանվորական կազմակերպութեան համար։

Միութեանական դիսցիպլինային յենթարկվել, նշանակում է ամեն կերպ աջակցել նրա վորոշումներին իրագործմանը, կատարել միութեան դրած բոլոր պարտականութեանները և միշտ դաստիարակի շահերը գերադասել անձնական և համախառն շահերից։

Դիսցիպլինան անհրաժեշտ է նաև այն պատճառով, վոր առանց նրան միութենական գեմոկրատիան անիրագործելի չէ։

«Առանց դիսցիպլինայի դեմոկրատիս-
չկա» — ասել է ընդ. Տոմսկին:

Միության կարգապահ անդամը չի
կարող անտարբեր (վոչ ակտիվ) լինել:
Կարիք չի լինի նրան քաջ տալ ընդհանուր
Ժողովի կամ ստիպել, վոր անդամավճար
տա: Իբրև միության իսկական տիրոջ՝ նա
միշտ առաջին շարքերում կլինի և միու-
թյան մարմինների վորոշումներին իսկույն
յենթարկվելով, նա պարտաճանաչու-
թյան, կարգ ու կանոնի և ընդհանուրի
շահերի նվիրվածության լավ օրինակ
կհանդիսանա ուրիշների համար:

Արհմիութենական դիսցիպլինան (կար-
գապահությունը) խիստ կարևոր խնդիր է:
Առանց դիսցիպլինայի՝ միությունները
անգոր կլինեյին քաղաքացիական պատե-
րազմի տարիներում համախմբել իրենց
ուժերը և հաջող վախճանի հասցնել սկսած
կռիվը: Առանց դիսցիպլինայի՝ միու-
թյուններն ի վիճակի չեյին լինի վե-
րականգնել արդյունաբերությունը: Ա-
ռանց պրոլետարական պողպատյա դիս-
ցիպլինայի՝ միությունները հետադաշում
ևս չեն կարող աշխատանքի արտադրողա-
կանությունը բարձրացնել, մեր սոցիա-
լիստական տնտեսությունն ամրապնդել և
դրանով արդեն բանվոր դասակարգի կույ-

տուրական և տնտեսական վիճակը բարե-
լավել:

Արհմիութենական դիսցիպլինան հա-
մախմբում է մեր շարքերը և միության
յուրաքանչյուր անդամի սովորեցնում է
իր անձնական շահերը յենթարկել կուլեկ-
տիվի շահերին, բանվոր դասակարգի շա-
հերին:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր
միությունը մի շարք պահանջներ է առա-
ջադրում իր անդամներին: Դրա մեջ հիմ-
նականը՝ կանոնադրության և միութենա-
կան դիսցիպլինայի պահանջներին յեն-
թարկվելն է:

3. Ի՞նչ պատճառով և ո՞ւմ են վտարում միությունից

Մեր միությունը կամավոր կազմա-
կերպություն է: Նրա մեջ ընդունվում են
միայն նրանք, ովքեր ցանկանում են:
Միության մեջ մտնող յուրաքանչյուր ան-
հատ հենց դրանով հայտարարում է, վոր
ինքը համաձայն է միության կանոնա-
դրության հետ, ընդունում է այն և ցան-
կանում է յենթարկվել նրան և կատարել
միութենական մարմինների բոլոր վորո-
շումները:

Այսօրինակ դիպցիալիւնայի դոյու-
թյան դեպքում միայն միությունը կարող
է ամուր լինել և այնպիսի հսկայական
նպատակներ առաջադրել իրեն, վորոնց
մասին մենք խոսել ենք սկզբում:

Ահա թե ինչո՞ւ միությունից հեռաց-
նում են բոլոր նրանց, ովքեր շարունակ
խախտում են միութենական կանոնա-
դրությունը, միութենական պարտակա-
նությունները չեն կատարում և ուրիշնե-
րին ել արգելք են հանդիսանում կատա-
րելու, գիտակցաբար չեն յենթարկւում
միութենական դիպցիալիւնային և իրենց
գործողություններով, արարքներով վար-
կաբեկում են միության հեղինակու-
թյունը:

Միությունից հեռացվում են նաև
նրանք, վորոնք իրենց հանցագործու-
թյունների համար դատապարտված են
յեղել քաղաքացիական իրավունքների
զրկման, վորոնք բռնված են յեղել հասա-
րակական կամ միութենական գրամները
վատնելու, ինչպես նաև կաշառակերու-
թյան մեջ:

Գող-ավազակները, վատնումներ կա-
տարողները տեղ չունեն միութենական
կազմակերպության մեջ:

Ինքնրատինքյան հասկանալի չէ, վոր
միությունը չի կարող իր շարքերում հան-
դուրժել նրանց, ովքեր դավաճանում են
բանւոր դասակարգին՝ նրա կովի միջո-
ցին: Հեռացվում է միությունից այն ան-
դամը, վոր միության կազմակերպության
թույլտվությամբ սկսած գործադուլի ժա-
մանակ շտրեյքեիսեր է դառնում (աշխա-
տանքի չէ դուրս գալիս):

Միությունից վտարվում են բոլոր նը-
րանք, ովքեր, կանոնադրության 12-րդ
կետի համաձայն, միության անդամ լինել
չեյին կարող, բայց սխալմամբ ընդունված
են յեղել:

Միությունից վտարվողներից բացի՝
կան նաև այնպիսիները, վորոնք մեքենա-
յորեն (ինքնաբերաբար) դուրս են մնում
միությունից:

Այդպես՝ մեքենայորեն դուրս են մը-
նում միությունից բոլոր նրանք, ովքեր 3
ամսից ավելի անդամավճար չեն մուծում
և կամ 3 ամսվա ընթացքում նշանակել չեն
ավել իրենց գործադուլի լինելը:

Այդօրինակ դեպքերում միությունը
գտնում է, վոր անդամավճար չմուծողը
կամ իր գործադրկության մասին արձանա-
գրել չտվողը ինքն իր կամքով հեռանում է
միությունից: Միութենական կազմակեր-

սուլթանն պարտականութիւնն է իր ժամանակին նախազգուշացնել անդամավճարը կանոնավոր չտվողին և հիշեցնել, վոր նա կարող է դուրս մնալ միութիւնից:

Միութեան մեջ չեն մտնում նաև աշխատունակութիւնը կորցրածները և հաշմանդամ ճանաչվածները:

Միութիւնը պաշտպանում է վարձու աշխատող բանվորների և ծառայողների շահերը: Բայց յետե բանվորը կամ ծառայողը այլևս աշխատելու անընդունակ է և չի կարող աշխատել, այդ դեպքում միութեան կարիք չունի: Դրանց մասին հոգալու յետ արդեն վոչ թե միութիւնը, այլ սոցիալական ապահովութեան մարմինները, վորոնք այդպիսիներին մշտական թոշակ կրտան փորպես հաշմանդամների:

4. Սեզոնային բանվորը ինչպե՞ս կարող է իր անդամակցական իրավունքը պահպանել դադարի ընթացքում

Ինչպես սեզոնային բանվորներին միութեան մեջ ընդունելիս, այնպես էլ դադարի սեզոնում նրանց անդամակցական իրավունքը պահպանելու նկատմամբ միութիւնը մի քանի բացառութիւններ է սահմանում: Դադարի սեզոնում, յերբ չինա-

րարական աշխատանքները կանգ են առնում, սեզոնային բանվորների խոշոր մասը հարկադրված է դործազուրկ մնալ: Այդ ժամանակաշրջանում սեզոնայինների մեծամասնութիւնը գյուղ է վերադառնում: Միանգամայն սխալ բան կլինէր պահանջել, վոր յուրաքանչյուր Յ ամիսը մեկ անգամ սեզոնայինները ներկայանային միութենական մարմիններին՝ իրենց դործազրկութիւնը արձանագրել տալու համար: Մանավանդ, վոր գյուղում մենք միութենական մարմիններ չունենք, հետևաբար սեզոնայինը ստիպված պիտի լինէր Յ ամիսը մեկ անգամ քաղաք գալ: Միութիւնն այս հանգամանքը հաշի յետ առնում և սեզոնայիններին բոլորովին ազատում է դադարի սեզոնում միութեան մարմիններին ներկայանալու պարտականութիւնից:

Շինարարական սեզոնը վերջանալիս՝ սեզոնային բանվորը, կանոնադրութեան համաձայն, պարտավոր է գյուղ գալուց առաջ դուրս գրվել հաշվառումից և մինչև հունիսի 1-ը, այսինքն մինչև չինարարական հաջորդ սեզոնի յետուն չըջանը, նա այլևս հաշվառման չի գնում: Այդպիսով՝ սեզոնային բանվորը դադարի սեզոնի չըջանում կարող է Յ ամիսից ել տա-

վելի հաշվառման չենթարկվել, բայց և
այնպես համարվել միության անդամ:

Միությունը սեզոնային բանվորից
սկսանջում է միայն, վոր նոր սեզոնն
նկատվելիս անպայման արձանագրվի (հաշ-
վառման յենթարկվի) միության մեջ:

Հաշվառման ժամանակը մինչև հու-
նիսի 1-ն է վորոշված նրա համար, վոր
մինչև այդ շինարարական սեզոնը յե-
ռուկն վիճակումն է լինում արդեն: Շենքե-
րի վրա աշխատելու բոլոր մասդրություն
ունեցողները մինչև այդ ժամանակը (հու-
նիսի 1-ը) արդեն քաղաք կգան աշխա-
տանք վորոնելու համար: Միությունը
գտնում է, վոր ովքեր մինչև այդ ժամա-
նակ աշխատանքի չեն գալիս և մնում են
իրենց տանը, իրենց գյուղական տնտե-
սության վրա, նրանք կարիք չունեն միու-
թյան անդամ մնալու, այդ պատճառով և
նրանք մեքենայորեն դուրս են գալիս
Միությունից:

5. Միությունից հեռացնելու (վտարելու)
ինչպիսի կարգ է սահմանված

Այժմ տեսնենք, թե ինչ ձևով (կար-
գով) է կատարվում միությունից վտա-
րելը:

Միությունից վտարելը միութենա-
կան ամենամեծ պատիժն է: Միությունից
վտարել, նշանակում է վտարվածին հա-
մարել իր դասակարգի անարժան անդամ,
նրան բանվորական կադմակերպության
համախմբված շարքերից դուրս անել:
Այդ պատժի հետևանքը աշխատավորի
համար սովորաբար շատ ծանր է լինում:

Սակայն պետք է ասել, վոր շատ ան-
գամ տեղական միութենական կադմա-
կերպությունները բավական լուրջ չեն
մոտենում վտարման հարցին: Դեպ-
քեր են լինում, վոր միությունից
վտարում են ընդհանուր ժողովների
չգալու, հարբեցողության, գործից (աշ-
խատանքից) ուշանալու, յեկեղեցի գնա-
լու և ուրիշ նման պատճառներով:

Միությունը չպետք է վտարումը
դարձնի պատժիչ մի միջոց՝ ազդելու հա-
մար իր անդամների վրա, վորոնք քիչ
ակտիվություն են ցույց տալիս դեպի
միութենական աշխատանքները, վորոնք
քիչ գիտակցություն ունեն և քաղաքա-
կանապես դեռ այնքան ևլ լուսավորված
չեն:

Այդ խնդրի առթիվ միությունների
6-րդ համագումարում ընկ. Տոմսկին ա-

սել ե.—«Միությունը իր մեջ միացնում
է մեծ մասամբ զեռ հում, քիչ զիտակից
բանվորական մասսա: Այդ մասսայի
միջից զեռ զուրս չեն յեկել հին նախա-
պաշարումները, նա զեռ անսովոր և միու-
թյան կյանքին ահտիվ մասնակցելու:
Արհմիության այդպիսի հետամնաց ան-
դամների վրա զեռ պետք է շատ չարճար-
վել, համոզել, դաստիարակել նրանց:
Յեթե ամեն մի դատարկ պատճառով
միությունից քչելու լինենք, ել ո՞ւմ և
ինչո՞ւ համար և միությունը»:

Արհմիությունների նպատակները
բացատրելիս՝ ընկ. Լենինն ասում եր, վոր
արհմիությունները պետական, հարկա-
դրելու, ստիպելու կազմակերպություն
չեն, այլ նրանք դրավելու, սովորեցնելու
կազմակերպություններ են. նրանք դըպ-
րոց են, վոր սովորեցնում են կառավարել,
տնտեսություն անել: Նրանք կոմունիզմի
դպրոցն են: Յեվ քանի վոր արհմիու-
թյունները նախ և առաջ դաստիարակող
կազմակերպություն են, նրանք իրենց
անդամների վրա ազդում են, գլխավորա-
պես, համոզելու, որինակ հանդիսանալու
և նրանց կուլտուրական մակարդակը
բարձրացնելու միջոցով:

Միությունից վտարելը, իբրև բարձ-
րագույն պատիժ, պետք է կիրառվի զգու-
շավորությամբ և ծայր անհրաժեշտու-
թյան դեպքերում, յերբ վտարվողի դեմ
հարուցված մեղադրանքները ապացուց-
ված են, յերբ վտարվողը ծանր հանցանք
է կատարել և յերբ բոլոր մյուս դաստիա-
րակչական միջոցները սպառված են:

Վտարման հարցը անպայման պետք
է քննի այն ձեռնարկության ընդհանուր
Ժողովը, վորտեղ աշխատում է վտար-
վողը:

Մասսաներին վտարման հարցը քննե-
լուն մասնակից անելը մեկ կողմից դաս-
տիարակչական մեծ նշանակություն ու-
նի, իսկ մյուս կողմից՝ կանխում է հնա-
րավոր սխալները և շտապ ու չհիմնավոր-
ված վճիռները:

Ինքը վտանդոն ել պետք է ներկա
լինի այն Ժողովում, վորտեղ նրա հարցն
է քննվում և վճռվում:

Միությունից վտարվող բանվորների
և ծառայողների իրավունքները պահպան-
վում են նաև նրանով, վոր կանոնադրու-
թյամբ նրանց իրավունք է տրվում բո-
ղոքել այդ վճռի դեմ՝ միութենական ա-
վելի բարձր մարմինների առաջ:

6 ամսից ավելի ժամանակով վտարման վճիռը ներկայացվում է միութենական ավելի բարձր կազմակերպության քննության և անպայման հաստատվում է կոնֆերանսի կամ համագումարի կողմից: Իսկ մեկ տարուց ավելի ժամանակով վտարման վճիռը հաստատվում է միության Կենտրոնական Կոմիտեն:

Միությունից վտարելը մշտական լինել չի կարող: Յեթե վտարվածը իր վարքով ու աշխատանքով ապացուցի, վոր այնուամենայնիվ կարող է միության արժանավոր անդամ դառնալ, նա կարող է նորից միության մեջ ընդունվել:

Անորոշ ժամանակով վտարվածները կարող են միջնորդել իրենց վերընդունելու միության մեջ, վոր չուտ քան վրտարվելուց 1—1½ տարի հետո:

Վորոշ ժամանակով վտարվածները կարող են նորից ընդունվելու միջնորդության հարուցել՝ իրենց պատժի ժամանակը լրանալուց հետո:

Թե վտարվածները և թե մեքենայորեն միությունից դուրս մնացածները կորցնում են միության անդամի բոլոր իրավունքները և միության մեջ վերընդունվում են ընդհանուր հիմունքներով,

մուտքի վճար մուծելով: Այդ դեպքում նրանք կորցնում են միութենական ստաժը:

Միության անդամավճարը 3 ամսից ավելի չվճարելու հետևանքով՝ մեքենայորեն միությունից դուրս մնացածներին հին ստաժը կարող է վերականգնվել միության վարչության առանձին վորոշմամբ՝ հին պարտքը ամբողջությամբ վճարելու պայմանով միայն:

Յերկու գրույցներն ամփոփելով, մենք հանգում ենք հետևյալ յեզրակացություններին.

1. Արհմիությունները, վորպես բանվոր դասակարգի կազմակերպություն, միավորում են նրանց, վորոնք վարձու աշխատողներ են:

Միությունն իր շարքերը բոլորովին չի ընդունում նրանց, վորոնք թշնամի յեն բանվոր դասակարգին և վորոնց շահերը հակառակ են բանվոր դասակարգի շահերին (առևտրականներ, ձեռնարկությունների մասնավոր տերեր, գործընկերներ և հավատարմատարներ, կրոնական դասի ծառայողներ, անաշխատ յեկամուտով ապրողներ, ուրիշի վարձու աշխատանքից ոգավողներ և այլն):

3. Միությունը չի ընդունում նրանց, վորոնք անցյալում կովել ու հարածել են

բանվորներին (ժանդարմներ, գաղտնի վոստիկանության մեջ աշխատողներ և այլն) :

4. Միությունն իր շարքերը փակում է նաև կիսապրոլետար տարրերից, չի ընդունում տնայնագործ արհեստավորներին, աշխատանքային կոոպերատիվ արտերներին :

5. Միությունը մի շարք սահմանափակումներ է դնում սեզոնային բանվորներին միության մեջ ընդունելու համար, վորոնք կապված են գյուղական տնտեսության հետ : Միությունն աշխատում է ընդունել այն սեզոնայիններին, վորոնք ամեն տարի գալիս են աշխատելու կառուցումների վրա, վորոնք ամուր են կապված արտադրության հետ և սկսում են կամաց-կամաց կտրվել գյուղական տնտեսությունից :

Միաժամանակ միությունը իր շարքերում չի ընդունում նրանց, վորոնք միայն պատահական կերպով և կարճ ժամանակով են ընկնում չինարարության մեջ :

6. Այդպիսով՝ միությունը ձգտում է պահպանել իր դասակարգային մաքրությունը, նա ընդունում է ընչազուրը բանվորներին (պրոլետարներին) կամ աստիճանաբար ընչազուրկ դարձող բանվորներին :

րին (կիսապրոլետարներին) : Այդ ամբողջ մասսան ընդգրկելով՝ միությունը ձգտում է դաստիարակել նրան դասակարգային նպատակների վողգով՝ պաշտպանելով նրանց շահերը, բարձրացնելով նրանց կուլտուրական մակարդակը, մտցնում է միութենական պրոլետարական դիսցիպլինա և սովորեցնում է նրանց իրենց անձնական շահերը յենթարկել համագոսաակարգային շահերին :

7. Միությունն իր շարքերից վտարում է բոլոր նրանց, վորոնք գիտակցորեն չեն յենթարկվում միութենական դիսցիպլինային, վորոնք իրենց գործողություններով դիտավորյալ կերպով վնասում են կազմակերպությանը, վարկաբեկում են նրան և լարված կուլի ընթացքում դավաճանում են իրենց կազմակերպությանը :

8. Միությունը չի կարող իր շարքերում թողնել քրեական հանցանք կատարողներին, պետական, հասարակական կամ միութենական դրամները հափշտակողներին :

9. Ինքնաբերաբար մեքենայորեն միությունից դուրս են գալիս միութենական հիմնական պարտականություններից խուսափողները—անդամավճար չմուծողները :

և միութեան մեջ գործադրելութիւնը նշանակել չտալովները:

10. Միութեանից վտարումը միութեանական բարձրագույն պատիժն է, այդ պատճառով եւ զա պիտի գործադրել միայն բացառիկ դեպքերում, խիստ զգուշափութեամբ, միութենական ներգործման բոլոր միջոցները գործադրելուց հետո:

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս նյութի մշակումը նույնպէս պետք է կատարվի զրույցի ձևով:

Զրույցը պետք է սկսել այն հարցով, թե միութիւնն ի՞նչ պարտականութիւններ է դնում յուրաքանչյուր անդամի վրա, ի՞նչ է պարտավոր անել միութեան անդամը:

Այս հարցի պատասխանը կնպաստի պարզելու այն պարտականութիւնները, վոր դնում է միութիւնն իր անդամների վրա: Միաժամանակ կպարզվեն և նրանց ելութիւնն ու նշանակութիւնը: Պարտականութիւնների հայտարարումը կհանգի միութենական դիսցիպլինային: Զրույցի այս մասում պետք է կանգ առնել պարզելու միութենական դիսցիպլինայի ելութիւնն ու նշանակութիւնը, նրա անհրա-

ժեշտութիւնը: Այս խնդիրը պարզելուց հետո՝ պետք է պարզել թե ովքե՞ր, միութեան կանոնադրութեան համաձայն, վրտարվում են միութիւնից, մանավանդ վոր զրույցի նախորդ մասը ունկնդիրներին բացատրում է, թե միութիւնը ո՞ւմ չէ կարող իր շարքերում թողնել:

Նկատի առնելով, վոր ունկնդիրներին մեծ մասը սեզոնայիններ կլինեն, նպատակահարմար է կանգ առնել այն կետի վրա, թե սեզոնայինը ի՞նչ պետք է անի՝ դադարի սեզոնում իր անդամակցութեան իրավունքը պահպանելու համար:

Առանձին ուշադրութիւն պետք է կենտրոնացնել միութիւնից վտարելու կարգի և այդ հարցին զգուշափոր փոփոխութիւններ անհրաժեշտութեան վրա:

Ոգտակար կլինի յերկու զրույցներն եւ վերջացնել ընդհանրացած յեզրակացութիւններով, վորոնք, որինակ, բերված են այս զրույցի վերջում, վորպէս ընդհանուր ամփոփումն մշակված նյութի:

Յեթե հնարավոր է, լավ է այդ յեզրակացութիւնները գրի առնել:

Գրականութիւն. Միութեան կանոնադրութիւնը, միութեան անդամի ընդունելութեան և վտարման հրահանգը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0202938

142.

31.8

R-48